

1164

1743-6
ԱՎՏՈ ԳՈՐԾԻ ԶԵՌՆԱՐԿ

ԱՎՏՈ ԿՈՒՐՍԵՐԻ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Կազմեց՝ Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ


ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

629.1/3

5-38

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ 18-ՐԴ
ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ



ԿՅՈՒՆՈՅԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԸ ՍՐԱՆԻՑ 160 ՏԱՐԻ ԱՌԱՋ 1769 Թ.

ԶԵՌՆԱՐԿ ԱՎՏՈ-ԿՈՒՐՍԵՐԻ
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կազմեց Ա. Տեր-Գրիգորյանը

Գրառեպ. № 1033 (բ) Տիրամ 250
Հայկական համալսարանի 2-րդ տղ. պատ. № 696

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ 18 ԴԱՐՈՒ ՍԿԶԲԻՆ

160 տարի սրանից առաջ, 1769 թ. Ֆրանսիայի Փարիզ քաղաքում ղինվորական ճարտարապետ Կյունոն հնարեց առաջին ավտոմոբիլը: Կյունոյի ավտոն նման էր մանկական յեռանիվ հեծանիվին, վորի անիվները սայլի անիվների նման յերկաթյա շրջանակով էին, շարժիչն յերկու զլանանոց՝ աշխատում էր շոգու միջոցով, նա կառուցած էր ավտոյի առաջին անիվի վրա (յերկու կողմից): Առջևի անիվը նրա և՛ տանող և՛ ուղղություն ավողն էր. Կյունոսի ավտոն անցնում էր մի ժամում հինգ կիլոմետր: Փարիզում 1770 թվին հրավիրվեց հատուկ հանձնաժողով տեսնելու և փորձելու Կյունոյի ավտոմոբիլը, և յերբ Կյունոն մեքենան աշխատացրեց, մեքենայի սոսկալի աղմուկից հանձնաժողովի բոլոր անդամները վախան: Կյունոն մեծ ջանք թափեց հանձնաժողովին նորից հավաքելու և համոզելու մեքենային մոտիկից նայել:

Առաջին տղավորությունը և մեքենայի աշխատանքը բավարար յերևաց, բայց վերջում հանձնաժողովը հիասթափվեց, վորովհետև ավտոմոբիլը տասնհինգ բուպե գնալուց հետո 15 բուպե սպասում էր նոր գոլորշի հավաքելու համար: Այս հանգամանքը սաստիկ զանգաղեցրեց գործը, վորի հիման վրա առաջարկեցին Կյունոյին իր ավտոմոբիլի ավելի հարմար շինվածք տալու:

Կյունոն նորից ձևափոխեց իր ավտոմոբիլը, վորը գնում էր մեկ ժամ և կանգնում էր տասը բուպե նոր շողի հավաքելու համար: Մեկ տարուց հետո հրավիրվեց նոր հանձնաժողով, վորը չկայացավ և Կյունոն սպասելով 30 տարի, մեռավ ծախսելով գյուտի վրա իր վերջին խնայած կուպեկները:

1801 թ. Կյունոյի ավտոն — զրվեց Փարիզի թանգարանում: Կյունոյի փորձերը մեծ հետաքրքրություն առաջացրեց ամբողջ աշխարհում, գանադան յերկրներից հավաքվում էյին Փարիզ լավագույն կոնստրուկտորներ և ամիսներով զբաղվում Կյունոյի գյուտի ուսումնասիրության վրա: Վերջապես 1803 թ. Անգլիայում ավտոկոնստրուկտոր Ռիչարդ Տրուգվիլը հնարեց նոր ձևի ավտոմոբիլ վորի հետեի անիվները ավտոյի քաշող տանողն էյին, իսկ առաջին անիվները ուղղություն ավողն. նրա շոգեկաթսան գանվում էր կուզովայի տակ, շարժիչի դանները տեղավորված էյին հորիզոնական, մեքենան աշխատում էր անընդհատ անելով 8 կիլոմետր մեկ ժամում: Ավտոմոբիլի գյուտը ինչպես Ռ. Տրուգվիլի, այնպես էլ Կյունոյի, ունեյին միևնույն կողմիս պակասությունները այսինքն՝ փողոցի անկյունը շրջելիս հետևի անիվները անում էյին միևնույն արագությունը, անկյուններում փոքր շրջան վերցնել անկարելի յեր լինում և զրա համար էլ պատահում էյին հաճախակի շրջումներ: Այս հանգամանքը յերկար ժամանակ գանդադեցրեց ավտո տեխնիկայի զարգացումը և ի վերջո 1829 թ. կոնստրուկտոր Զեմսը զրտավ դիֆֆերենցիալնի մեխանիզմը հետևի անիվների համար: Զեմսի գյուտը մեծ հեղաշրջում առաջացրեց ավտոտեխնիկայում: Թվում էր թե ամեն ինչ արված էր, բայց վոչ: Ավտո տեխնիկան պահանջում էր նորանոր բարելավումներ: Գործնականը ցույց տվեց, վոր այդ ավտոն հարթ տեղում գնում և ավելի արագ ձիաքարչից, իսկ վերելքին հետ է մնում նրանից: Այս հանգամանքը նույնպես քիչ չէր խանգարում ավտո տեխնիկայի զարգացմանը և այդ պատճառով շատերը հրաժարվեցին մեխանիկական փոխադրումից ու քարչից: Մարդատար ավտոմոբիլային հաղորդակցությունը 1838 թ. Անգլիայում հրաժարվեց ավտո փոխադրությունից այն պատճառով, վոր շարժիչը չէր աշխատում միատեսակ թե վերելքին և թե հարթ տեղերում: 1843 թ. կոնստրուկտոր Գիլլը գոյություն ունեցող պակասությունը վերադրեց, գանելով արագությունը փոփոխող մեխանիզմը (կարողակա սկորու-


տեյ): Վորով թեթևացրեց վերելքին շարժիչի աշխատանքը: Այս գյուտից հետո ավտո տեխնիկան սկսեց հսկայական քայլերով զարգանալ: Առաջացան ավտո դորժարաններ: Ավտոյի ծանրությունը, շինվածքը, ծանրաշարժ զրու-թյունը իհարկե, չէր կարող աչքաթող լինել նոր կոնստրուկտորների ուշադրությունից և զրա համար էլ նրանցից յուրաքանչյուրը նոր տիպի ավտո-շինվածքին՝ աշխատում էյին խուսափել վերոհիշյալ պակասություններից: Սկսեցին շինել բացի շոգե շարժիչներից նաև գազե, ելեքտրական և խտացրած ողի շարժիչներով ավտոմոբիլներ: Բայց և այնպես այն վեհ նպատակին չէյին կարողանում հասնել վորը պահանջում էր ավտո տեխնիկան: 1885 թ. վերջապես գերմանացի կոնստրուկտոր Բենցը և անգլիացի Դայմլերը գտան ներքին այրման շարժիչ, այդ շարժիչները սկսեցին բավարարել այն պահանջներին, վորոնց հետևում էյին բոլոր կոնստրուկտորները այսինքն՝

- 1) թեթև կշռով (ծանրության)
- 2) շինվածքով փոքր (համաչափ)
- 3) ուժեղ և արագաշարժ (ըստ ուժի):

Շուկայում յերևալով ավտոմոբիլներ ներքին այրման շարժիչներով, մեծ հետաքրքրություն առաջացրին ամբողջ ավտո-աշխարհում: Բենց և Դայմլերը՝ կոնստրուկտորների հետ աշխատել սկսեցին միաժամանակ և Լենուտոր իր գաղային շարժիչներով: Կոնստրուկտոր Սեպալենը իր շոգե-շարժիչներով և առանձնակի գեներատորով «Սեպալեն» սխտեմի, վորը զգալի կերպով թեթևացրեց ավտոյի կշիւը (ծանրությունը), շոգեկաթսային տալով վայրկյանական շոգեզուրչացում: Ավտոների առավելության հարցին վերջնական վճիռ տալու համար Փարիզում 1869 թվին կազմակերպվեց առաջին ավտո մրցումը, վորտեղ մասնակցում էյին 35 մեքենա՝ ներքին այրման, 30 շոգեմեքենա, 5 մեքենա խտացրած ողով, 4 մեքենա ելեքտրականությամբ, 2 մեքենա գաղային շարժիչով և 30 մեքենա այլ կողմության: Այս անգամ էլ բացառապես հաղթողը հանգիստացան այն մեքենաները, վորոնք ունեյին Բենց և Դայմլեր սխտեմի ներքին այրման շարժիչներ: Առաջին հա-

մաշխարային ավտո մրցումը լավ համբավ ծառայեց Բենց և Դայմլեր սիստեմաների համար, վորոնք պահպանվում են մինչև հիմա, իսկ գլխավորն այդ մրցման այն է, վոր նա առաջացրեց ավտոմոբիլների արագ կատարելագործումն ու տարածումը: Մեծ դեր խաղացին նաև կոնստրուկտոր Պա- նար Լեվասսորը. նա կարողացավ վորոշել շարժիչի տեղը ավտոյի վրա, վորը մինչև այդ վիճելի յեր: Ներքին այր- ման շարժիչները Բենց և Դայմլերի յերկրորդ համաշխա- րային ավտո մրցմանը նորից տվին առավելություն, անե- լով 22 կիլոմետր մեկ ժամում: Յերկու տարուց հետո ներքին այրման շարժիչներն ավտո մրցման ժամանակ տվին 44 կիլոմետր արագություն մեկ ժամում (յերկու անգամ ավելի նախկինից): 1912 թ. ավտոմոբիլներն ըս- կեսիցին տալ արագություն՝ մոտ մեկ հարյուր կիլոմե- տրը մեկ ժամում: Այս է համառոտ պատմությունը ավտո զարգացման 18-րդ դարի սկզբներից մինչև 1912 թ., վորից հետո մինչև հիմա ավտո-տեխնիկան հսկայական քայլե- րով է առաջադիմել: Այժմ մենք սկսենք ծանոթանալ ավտոմոբիլի գլխավոր մասերի հետ (արտաքին տեսքով), իսկ հետո ներքին հնրանց նշանակությունը: Ավտո զործը պարզ և հասկանալի լինելու համար կտամ ձեզ հարցեր:

ՀԱՐՅ. — Ի՞նչ է նշանակում ավտոմոբիլ.



ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ՇԱՍՄԻՆ ԿՈՂՔԻՑ ՅԵՎ ՎԵՐԵՎԻՑ

ՊԱՏԱՍԽԱՆ. — Ավտոմոբիլ-նշանակում է ինքնաշարժ կառք.

Հ. — Ի՞նչ մասերից է բաղկացած ավտոմոբիլը.


Պ. — Ավտոմոբիլը բաղկացած է յերկու գլխավոր մա- սերից, կուզովայից և շասիից.

Հ. — Ի՞նչ տիպի մարդատար կուզովներ են լինում.


Պ. — Մարդատար կուզովները լինում են բաց և ծած- կած, 2- 4 և վեց սեղանի, իսկ ավտոբուսները լինում են 8-ից մինչև 64 տեղանի, բայց կուզովները լինում են




ԴՈՒՐԼ-ՖԱՅՏՈՆ



ՏՈՒՐՊԵԴՈ



ԼԻՄՈՒԶԻՆ



ԼԱՆԴՈՒԼԵ

յերկու տիպի, Դուրլ ֆայտոն և Տուրպեդո, իսկ ծածկած- ները Լիմուզին և Լանդուլե.


Հ. — Ի՞նչ տեսակի ավտոկուզվաներ են լինում.

Պ. — Մարդատար, ապրանքատար, հիվանդատար, մըր- ցման, զրահապատ, հրդեհի և այլն.

Հ. — Ի՞նչ է շասիին.

Պ. — Ավտոմոբիլն առանց կուզովայի կոչվում է շասի, շասին բաղկացած է ռամայից, կոնսկից, յերկու գույգ անիվներից, առաջի սոնուց, հետի յերկու կիսա- սոնիներից ռեսորներից, զեկի մեխանիզմից, ռադիա- տորից, վինտիլյատորից, շարժիչից, կարբյուրատորից,

մագնետայից, շաղկապման մեխանիզմից կարող կա սկո-
րոսայից, կարգանից, կարգանի վալից, գիֆֆերենցիայից,
ձեռքի արգելիչից, մախավիկից, խաղաման մեխանիզմից,
բենզինի բակից և պղինձե խողովակներից:



ՌԱՄԱ

Հ.—Ի՞նչ է ռաման և ինչից է նա կազմված.

Պ.—Ռաման շրջանակ է կազմված յերկու յերկար
և 4-5 կարճ պողպատյա բաղկաններից, վորի վրա տարա-
ցրված է շաստի բոլոր մասերը և մեխանիզմը.

Հ.—Ի՞նչպես է կոչվում ռամայի առաջի և հետևի մա-
սերը.

Պ.—Թաթեր.

Հ.—Ի՞նչով են միացած ռամայի անկյունները և բալ-
կանները միմիանց.

Պ.—Պողպատյա զակլյովկաններով, իսկ անկյունները
անկյունաշափերով.

Հ.—Ի՞նչից են պատրաստում ռաման.

Պ.—Շտամպովանի պողպատից.

Հ.—Կարելի՞ չէ արդյոք ծակել ռաման զանազան
պեպերի համար.

Պ.—Վոչ չի կարելի.

Հ.—Ի՞նչպես է ճաքվում և կոտրվում ռաման.

Պ.—Ռաման սկզբից ճաքում է իր ներքին մասից,
և ապա ճաքը լայնանալով նա կոտրվում է.

ԿՌՆԱԿ (գավազնայա ուռչկա)

ՀԱՐՅ.—Ի՞նչի համար է ծառայում շարժիչն աշխա-
տացնող կոնակը.

Պ.—Շարժիչն աշխատացնող կոնակը ծառայում է
մատուցել խող պցելու համար.

Հ.—Ի՞նչպես է աշխատեցնում կոնակը շարժիչին.


Պ.—Շարժիչը աշխատեցնող կոնակը մենք միացնում
ենք ծնկաձև ստանցքի տառաններին, կամ շափնկայի հետ.
պտտելով կոնակը մենք աշխատացնում ենք միացները և
ստանում ենք պայթույթներ գլանների մեջ.

Հ.—Ի՞նչպես պետք է բռնել ձեռ-
քում շարժիչը աշխատացնող կոնակը:

Պ.—Կոնակը հարկավոր է բռնել
բոլոր մասերը մի կողմից և ձգել տա-
կից (ինչպես ցույց է տալիս նկարը).

Հ.—Ի՞նչի համար է կոնակի զըս-
պանակը (պռուժինը).

Պ.—Զսպանակը հետ է խփում
կոնակին մատուցել աշխատելու վար-
կյանին.



ԿՌՆԱԿԸ ՁԵՌՔՈՒՄ
ԲՈՆԵԼՈՒ ԺԵՏ ՁԵՎԸ

Ա Ն Ի Վ Ն Ե Ր

ՀԱՐՅ.—Ի՞նչ մասերից է բաղկացած անիվները.

Պ.—Անիվները բաղկացած են հետևյալ մասերից.

- 1) ստուպիցայից 2) սպիցաններից
- 3) փայտե ու պողպատյա որոգնե-
րից.



Հ.—Ի՞նչ տեսակի անիվներ են լի-
նում ընդհանրապես.

Պ.—Անիվները լինում են չորս տե-
սակի 1) փայտե սպիցաններով 2) պողպատե
սպիցաններով 3) չուղունից թափված և 4)
սինաձև.

Հ.—Ի՞նչ տեսակ փայտից են պատրաս-
տում անիվները:

Պ.—Կաղնուց, ամերիկական աղացիա-
յից, և յասենիից (հացենի).

Հ.—Վոր անիվներն են կոչվում վե-
դուշի.

Պ.—Հետևի անիվները.



ԱՆԻՎԻ ՓԱՅՏԵ ՊՈՂՊԱՏԵ
ՈՐՈՂԸ ՄԻՋԻՑ ԿՏՐԱԾ


ՇԵՏԻ ԱՆԻՎԸ ՇԵՆ-
ԹԱՅԱԿԱՊ, ՑԵՆԻ,
ՅԵՎ ՁՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հ.—Վերը անիվներն են՝ կոչվում նապրավլյաուշչի.

Պ.—Առաջի անիվները.

Հ.—Ի՞նչ ե նշանակում բուքսավանի, լինչից ե դա պատահում և լինչ պետք ե անել այդ դեպքում.

Պ.—Բուքսավանի նշանակում ե յերբ հետևի անիվները պտտվում են բաց ավտոմորիլը տեղից չի շարժվում. դա պատահում ե ցեխի, սառույցի և ձյունի ժամանակ: Այդ դեպքում պետք ե հետի անիվների վրա ձգել հատուկ շղթա անիվի չափսին.



ԱՌԱՋԻ ԱՆԻՎԻ ՊՈՂ-ՊԱՅՅԱ ՇՐՋԱՆԱԿԸ ՇԱՆԱՄ

ՌԵՍՍՈՐՆԵՐ

ՀԱՐՑ.—Ի՞նչից են պատրաստում ռեսսորները.

Պ.—Ռեսսորները պատրաստում են հատուկ ձկուն պողպատից.

Հ.—Ի՞նչ տեսակի ռեսսորներ են լինում.

Պ.—Ռեսսորները լինում են մեկ տակ, յերկու տակ և միտակուս կես, նրանք կոչվում են կիսակեսպատիկ, ելեպ-



ԿԻՍԱԵԼԵՊՏԻԿ



ԵԼԵՊՏԻԿ



3/4 ԵԼԵՊՏԻԿ

տիկ և յերեք քառորդ ելեպտիկ.

Հ.—Ի՞նչ մասերից են բաղկացած ռեսսորները և ինչու համար են նրանք ծառայում.

Պ.—Ռեսսորները բաղկացած են՝ 1) զլխավոր թերթից իր ականջներով 2) 4—11 հատ փետուրներից 3) կենտրոնական բոլորից և 4) խամուսներից: Ռեսսորները պահպանում են ավտոմորիլի մեխանիզմը և նստողներին՝ ճանապարհի ցնցումներից ու հարվածներից:

Հ.—Բանի ռեսսոր ունի ավտոմորիլը.

Պ.—Ավտոմորիլն ունի յերկու, չորս և հինգ ռեսսորներ.

Հ.—Ի՞նչպես պետք ե պահպանել ռեսսորները.

Պ.—Ամեն վեց ամիսը մեկ անգամ հարկավոր ե հանել նրան իր տեղից, քանզի նրա փետուրները, լվանալ նավթով, քսել տավոտ, նորից հավաքել, ներկել և դնել իր տեղը.

Հ.—Ինչիցն ե կոտրվում ռեսսորը.

Պ.—Ռեսսորը կոտրվում ե ժանգից և շոֆֆերի անզգուշությունից.

ԱՍՈՐՏԻԶԱՏՈՐ

Հ.—Ի՞նչի համար ե ծառայում ամորտիզատորը.

Պ.—Ամորտիզատորը թեթևացնում և հեշտացնում ե ռեսսորների աշխատանքը.

Հ.—Ի՞նչ տեսակի ամորտիզատորներ են լինում ընդհանրապես.

Պ.—Ամորտիզատորները լինում են բեզինից, զսպանակի միջոցով և զիդրավե-լիչեակի (յուղի և միտցի միջոցով).



ՌԵԶԻՆԵ ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐ



ԿՐԿՆԱԿԻ ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐ ՆՐԱ ՇԱԳՆԵԼՈՒ ԶԵՎԸ



ԶՍՊԱՆԱԿՈՎ ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐ

ԲԱՇԽՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ (ՈՍԱՊՐԵԳԵԼԻՏԵԼԻ մեխանիզմ)

Հ.—Ի՞նչ ե ոսպրեգելիտեխնի մեխանիզմը և ինչու համար.


Պ.—Այն մեխանիզմը, Վորը աշխատանքում ե ոսպրեգելիտեխնի վալին, մագնետյին և պոմպային, կոչվում ե ոսպրեգելիտեխնի մեխանիզմ, նա գտնվում ե կարտերի առաջին մասում և գերմեաիկ փակված ե իր կրիշկայով.

Հ.—Ի՞նչպես ե աշխատում ոսպրեգելիտեխնի մեխանիզմը.

Պ.—Ծնվածե առանցքի վրա խուլ հաղցրած և շեռտերունկա, վորը պտտվելով պտտում է այն շեռտերունկային, վորը հաղցրած է ռասպրեդելիտեղնի վալի ղլխին: Ռասպրեդելիտեղնի վալը պտտվելով պտտում է մանգնե. տոյի պոմպայի վալերին.

Հ.—Ի՞նչ մեծության պետք է լինի կալենչաի վալի և ռասպրեդելիտեղնի վալի շեռտերունկաները.

Պ.—Ռասպրեդելիտեղնի վալի շեռտերունկան պետք է լինի յերկու անգամ մեծ, վորովհետեւ ծնկածե առանցքը անելով յերկու պտույտ, ռասպրեդելիտեղնի վալը այդ ժամանակամիջոցին պետք է անի մեկ պտույտ:



ԿԱՐՏԵՐԻ ԱՌԱՋԻ ՄԱՍՈՒՄ ՅԵՐԵՎՈՒՄ Ե ԲԱՇԽՄԱՆ ՄԵԽՆԻԶՄԸ

ՂԵԿԻ ՄԵԽԱՆԻԶՄ (ՈՒԼԵՎՈՅ ՄԵԽԱՆԻԶՄ)

Հ.—Վճրտեղ են կառուցում ղեկի մեխանիզմը.


Պ.—Ղեկի մեխանիզմը կառուցում են մատորի աջ կամ ձախ կողմում.

Հ.—Ի՞նչպես պետք է լինի կառուցված ղեկը.

Պ.—Ղեկը չպետք է ունենա մեծ մեռյալ ընթացք, մեռյալ ընթացքը նա յե յերբ ղեկը շարժվում է, բայց այդ շարժումը չի ազդում ավտոյի առաջի անիվների վրա:

Հ.—Ի՞նչ գլխավոր մասերից է բաղկացած ղեկի մեխանիզմը.

Պ.—Ղեկի մեխանիզմը բաղկացած է ղեկի անիվից, զոխից, շապիկից, անվերջ վրնաից, կիսաշեռտերոկայից, մեխանիզմի շապիկից, ղեկի մատից և ղեկի ձգիչներից:



ՂԵԿԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿՐԻՇԿԱՆ ԲԱՑԱՄ

Հ.—Ի՞նչի համար է ծառայում բաղիատորը.

Պ.—Բաղիատորը ծառայում է մատորը ջրով հովացնելու համար.

Հ.—Ի՞նչպես է ջուրը կատարում շրջանառություն բաղիատորի մեջ.

Պ.—Ջուրը բաղիատորի առկի սեղերվուարից անցնում է գլանների շապիկի մեջ, այնտեղից բարձրանում է և լցվում բաղիատորի վերին սեղերվուարը, ապա խողովակների միջոցով ջուրը իջնում է բաղիատորի ներքին սեղերվուարը և նորից գնում գլանների շապիկի մեջ.

Հ.—Ի՞նչից են պատրաստում բաղիատորի սերյեվինան.

Պ.—Բաղիատորի սերյեվինան պատրաստում են բարակ պղնձե թերթիկներից, վորը կոչվում է լատուն.

Հ.—Ի՞նչ տեսակի բաղիատորներ է լինում.

Պ.—Բաղիատորները լինում են 1. խողովակածե 2. փեթակածե 3. կողավոր.

Հ.—Վճրտեղ են կառուցում բաղիատորը.

Պ.—Բաղիատորը կառուցում են մատորի առաջի կամ հետի մասում.

Հ.—Ի՞նչով են ածում ջուրը բաղիատորի մեջ.


Պ.—Ջուրն ածում են ծորակով, վորն ունի մալ.

Հ.—Ի՞նչ ջուր է հարկավոր բաղիատորի համար.

Պ.—Բաղիատորի համար հարկավոր է մաքուր ջուր, առանց կրային մասերի: Լավ ջուրը բաղիատորի համար անձրևի կամ ձյան ջուրն է.

Հ.—Ի՞նչու համար է ծառայում բաղիատորի կրիչկան.

Պ.—Բաղիատորի կրիչկան ծառայում է, վոր ջուրը բաղիատորից չթափվի, չընկնի բաղիատորի մեջ պտտա-



ՐԱԴԻԱՏՈՐ

հակաճան մասնիկներ (կեղտ) և ջրի ղողորջին դուրս չգալա-
ցիաառորի միջից:

Հ.—Ի՞նչն համար ե ծառայում ըաղիատորի կանս-
րոնի աբուբկան.

Պ.—Կանաւորնի տրուելան ծառայում եւ րազիատութից գտրորչին գուրս հանելու համար, յերբ րազիատորի ջարբը խիստ յեփ եւ դայիս.

Հ.—Ինչպէս իմանալ, Վոր քաղկիատորը վատ և աշխատող.

Պ.—Մատուրը չի քաշում, բաղիատուրի միջի ջուրը
յեւի և գալիս, զլանների վրայի թափված յուզն ուսում և
այրիկի և հոտ գալ.

Հ.—Ի՞նչով ե՞ն միայնում ըսցիւստորը մաստորի հետ.

Պ — Ռեդիկուս շլանդուդ.

Հ. — Բարեկամորդի զո՞ր մասունքն է ջուրը շուտ ստու-
ջու՞մ:

Պ. — Բաղիւստոսի ջուրը չուս սառչում և հրա ցածի մասում և պոմպայում.

Հ. — Կարելի՞ չէ քաղիաւոյրի ջուրը փոխել յերբ հա
յեփ է գարիս, —

Պ.—Կարելի չէ, բայց շատ զգուշ. հարկավոր է բացել ապրիատորի ներքեի կրանիկը և մինչուհե՝ ժամանակ վերերից ծորակով ածել ջուրը, մինչև վոր բաղիատորի ցածի կրանիկից կթափվի սառը ջուր.

Հ. — Վոր հովացումն է կոչվում տերմատոֆոն.

Պ.—Այն հովացումը, Վերի ջուրը շարժվում է բա-
ղիատորից գլանների շարքի մեջ առանց պոմպայի.

Հ.—Վոր հովացումն է կոչվում ցենտրաբեժնի.

Պ. Յենարարեժնի կոչվում է այն հովաքումը, վերը
ջուրը շարժվում է ճնշման տակ.

Հ.—Բացատրել տերմապիֆոնի լայն և վառ կողմերը.

Պ.—Տերմասիֆոնի լավ կողմն այն է, վոր նա աշխատում է ինքնուրույն առանց պոմպայի ոգնության (ֆիզիկայի օրենքի հիման վրա) իսկ վատ կողմն այն է, վոր մինչև ջուրը գլանները շապկի մեջ չի տաքանում նա չի շարժվում:

Հ. — Բացատրել ցեղաբաժնի հովաքումի լավ և վատ կողմերը.

կողմերը.

Պ.—Լավ կողմն այն է, վոր ցենսորաբաժնի ջուրը սկսում է հոսել անմիջապես, յերբ մատորը սկսում է աշխատել ու դրանով չի թողնում ջրի տաքանալը գլանների խատել ու դրանով չի թողնում ջրի տաքանալը գլանների շապիկի մեջ, իսկ վատ կողմն այն է, վոր յեթե պոմպան փչանա կամ թե ցրտից պայթի, բաղիատորի աշխատանքը (ջրի շարժումը) միանգամայն կխանգարվի և գլանները (ջրի շարժումը) միանգամայն կխանգարվի և գլանները կսկսեն իրիստ տաքանալ իսկ բաղիատորի ջուրը յեփ գալ.

Հ. — Կան արդյոք ալտումբլիւներ, վոլոնթ չափով
հասն ջրով.

Պ. — Այո, կան գերմանական «Մաֆի» սիւսեմի աշխատութիւնները, վերոնք չեն հովանում ջրով.

Հ.—Ի՞նչու համար են բողիկոսները կառուցում մատրի առաջին, զբաւ լաւ և վատ կողմերը.

Պ.—Բազիատորը կառուցում են մատորի առաջին վորովհետև նա ավտոմորիլի առջևում գտնվելով ավելի լավ է հովացնում իր միջի ջուրը, առջևում կառուցված բազիատորը լինում է ավելի փոքր և անգավորում իր մեջ քիչ ջուր, իսկ վատ կողմն ալն է, վոր բազիատորը գրտնվելով ավտոմորիլի առջևում ավելի շուտ կարող է յննթարկվել ավերման (փորձանքների).

Հ. — Ինչո՞ւ համար են բաղիատորը կառուցում մատորի հետևին.

Պ.—Վերսիլսեան մատուրի հետեին կառուցված լա-
դիաւորն ալեկի աղահով ե լինում վորձանքներից, նրա
վատ կողմն այն ե, վոր հա շատ մեծ ե, ծանր ե, շատ
ջուր ե տանում ե գանլում ե ողի հոսանքից հետո.

ՀՈՎԱՀԱՐ. (ՎԵՆՈՒԼԱՏՈՐ)

Հ. — Ի՞նչու համար ե ծառայում հովհարը.

Պ.—Հովհաննարը հովանոսում է բաղիատորի ջուրը, հովանոսում է գլաններին շապիկը զրսի կոշիկից և գուլուն է շարստում կապուտաի տակ հավաքված սլայթեցուցիչ խառնուրդը:

Հ.—Վնորտեղ ե կառուցվում հովանաբը, յերբ բաղիա-

տորը գտնվում է մատորի առաջին.

Պ. — Հովահարը կառուցում են մատորի առջևիկին, բաղիատորի հետևից.

Հ. — Ի՞նչպես է աշխատում հովահարը.

Պ. — Ծնկածե առանցքի վրա խուլ հազցրած է շկիֆ, վորը միանում է կաշվով հովահարի շկիֆի հետ, պտտվելով կաշին պտտվում է հովահարը.

Հ. — Լինում են արդյոք ավտոմոբիլներ, առանց հովահարի.

Պ. — Չեն լինում.

Պ Ո Մ Պ Ա (ճասոս)

Հ. — Ի՞նչ է պոմպան.

Պ. — Պոմպան՝ նասոս է, վորը քշում է ջուրը գլանների շապիկները միջից բաղիատորի մեջ.

Հ. — Ի՞նչպես է աշխատում պոմպան.

Պ. — Ռասպրեգելիտեինի մեխանիզմն ունի շեռտերիոնկա, վորը պտտում է պոմպին.

Հ. — Կո՞ւ արդյոք պոմպա բոլոր ավտոմոտորների վրա.

Պ. — Պոմպա ունենում են միայն այն մատորները, վորոնց ջուրը շարժվում է ճնշման տակ.



Հ. — Ի՞նչ անկանոնություն կարող է պատահել պոմպայի հետ.

Պ. — Պոմպան կարող է արաքվել, պոմպայի թիերը կարող են մաշվել, կոտրվել և պոմպայի շղոնկան կարող է կարվել.



Շ Ա Ր Ժ Ի Չ (մասոր)

Հ. — Ի՞նչ է մատորը.

Պ. — Մատորը ավտոմոբիլի այն մասն է, վորը քաշում, առնում է ավտոմոբիլին.



ՀՈՎԱՀԱՐԻ ՇԿԻՖՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԹԻՅԵՐԻ



ՊՈՍՊԱ

Հ. — Ի՞նչպե՞ս են աշխատում ներքին այրման շարժիչները.

Պ. — Ներքին այրման շարժիչներն աշխատում են բենզինով, սպիրտով և սպիտակ նավթով.

Հ. — Ի՞նչու ավտոմոտորները կոչվում են ներքին այրման.

Պ. — Վորովհետև խառնուրդն այրվում է գլանների միջում.

Հ. — Վերջապես տակտանի շարժիչներ են լինում ընդհանրապես.

Պ. — Շարժիչները լինում են 2 և 4 տակտանի.

Հ. — Վերջապես տակտանի մատորներ են կառուցվում ներկա ավտոմոբիլների վրա.

Պ. — 4 տակտանի.

Հ. — Ի՞նչպես են կոչվում մատորի տակտերը.

Պ. — Մատորի տակտերը կոչվում են ձծող, սեղծող, պայթող և արտածող.

Հ. — Ի՞նչ է նշանակում տակտ.

Պ. — Մխոցի ընթացքը՝ գլանի վերի մեռյալ կետից մինչև ներքին մեռյալ կետը, կոչվում է տակտ.

Հ. — Ի՞նչն է կոչվում գլանի մեռյալ կետը.

Պ. — Մեռյալ կետ կոչվում է այն կետը, վորից բարձր կամ ցածր, մխոցը չի կարող շարժվել գլանի մեջ.

Հ. — Վերջապես մեռյալ կետ ունի գլանը և ի՞նչպես են նրանք կոչվում.

Պ. — Գլանն ունի յերկու մեռյալ կետ, վերին և ներքին.

Հ. — Ի՞նչ է նշանակում մխոցի ընթացքը.

Պ. — Մխոցի ընթացք նշանակում է, յերկու մեռյալ կետերի մեջի տարածությունը.

Հ. — Ի՞նչպես են կառուցում շարժիչը ավտոմոբիլի վրա.

Պ. — Շարժիչը կառուցում են ավտոյի վրա կանգնած, պոսկած և թեք ընկած.

Հ.—Վերջան գլանանոց շարժիչներ են կառուցում ավտոյի վրա.

Պ.—Ավտոյի վրա կառուցում են 1, 2, 4, 6, 8 և 12 գլանանոց շարժիչներ.

Հ.—Ի՞նչ տարբերություն կա 2 և 4 տակտանի շարժիչների մեջ.

Պ.—Տարբերությունն այն է, վոր 2 տակտանի շարժիչը կատարում է 2 տակտ և տալիս է մեկ բանվոր-աշխատանք, իսկ 4 տակտանին անում է 4 տակտ և տալիս է նույնպես մեկ բանվոր-աշխատանք.

Հ.—Ի՞նչ է կատարվում գլանի մեջ 1-ին տակտին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տակտերին.

Պ.—Առաջին տակտին միացնելով իր վերին մեռյալ կետից-ներքին մեռյալ կետը, նա իր գլխով առաջացնում է գլանի մեջ գառարկություն, զրոյի ողջ զգալով գլանի դատարկությունը, մտնում է կարբյուրատորի ողի անցքից, ժիկլորից խլում է բենզին, ցրում և ինչպես պայթուցիչ խառնուրդ, մտնում է գլանի մեջ. 2-րդ տակտին միացր բարձրանալով ներքին մեռյալ կետից դեպի վերին կետը, նա իր գլխով սղմում է (գլանի) կամերա սփառի մեջ այդ պայթուցիկ խառնուրդը և չհասած իր վերին մեռյալ կետին 15°, գլանում առաջանում է ելք-տրական կայծ և պայթեցնում է զազը. 3-րդ տակտին միացր մեծ արագություն իջնում է ցած, կատարելով բանվորական ընթացք, 4-րդ տակտին բարձրանալով ներքին մեռյալ կետից վերին մեռյալ կետը, նա իր գլխով շարժում է պայթված զազը գլանից դուրս խլացման մեխանիզմի մեջ:

Գ Լ Ա Ն (ԳԻԼԵԳՐ)

Հ.—Ի՞նչ է գլանը.

Պ.—Գլանը-գլանաձև չուգունից թափված է, վորի մեջ աշխատում է միացր.

Հ.—Ի՞նչպես են թափում գլանները.

Պ.—Գլանները թափում են մեկ-մեկ, յերկուսը, 4-ը և 5-ը միասին. միասին թափված գլանները կոչվում են բլոկ մատոր.

Հ.—Ի՞նչ հաստություն են լինում գլանների պատերը.


Պ.—Գլանների պատերն ունենում են հաստություն 3-5 միլիմետր.

Հ.—Ի՞նչով է լավ և ինչով է վատ, յերբ գլանների գլուխը թափված է առանձին.

Պ.—Յերբ գլանների գլուխը թափված է առանձին, դրա լավ կողմն այն է, վոր կարելի յե նրա գլուխը հանել և վերեից մաքրել գլանի մեջի կեղտը, միացների գլուխը և գլանների շապիկը, իսկ վատ կողմն այն է, վոր յերբ գլանների պրակկատական ճաքած է կամ պայթված այդ գեպքում կկատարվի գազի կամ ջրի փախչում.

Հ.—Ի՞նչով է լավ և ինչով է վատ յերբ գլանների գլուխը թափված է միասին.

Պ.—Գլանների գլխի միասին թափվածը լավ է նրանով, վոր չի կարող կատարվի վոչ գազի և վոչ ել ջրի փախչում, բայց վատ է նրանով, վոր միացների գլուխը, գլանների մեջը և շապիկները վերեից մաքրելու համար չունի վոչ մի հարմարություն.



ԳԼԱՆԸ ԻՐ ՋՐԻ ՇԱՊԻԿՈՎ

Հ.—Վերն է գլանի բանվոր մասը.

Պ.—Գլանի բանվոր մասը կոչվում է յերկու մեռյալ կետերի տարածությունը.

Հ.—Ի՞նչու համար է ծառայում գլանի շապիկը.

Պ.—Գլանի շապիկը ծառայում է գլանը ջրով հովացնելու համար.

Հ.—Ո՞ւնեն արդյոք շապիկ ջրի համար, բոլոր շարժիչները.

Պ.—Վոչ, շապիկ ունեն միայն այն շարժիչները, վորոնք հովանում են ջրով.

Հ.—Պայթած գազի վո՞ր մասն է մնում գլանի մեջ.

Պ.—Մեկ տասյերրորդ մասը.

Հ.—Գլանի վո՞ր մասումն է պահվում պայթված գազը.

Պ.—Խփանալիքների բնի տակ.

Հ.—Ի՞նչու համար ե ծառայում կոմպրեսսիոն կրանիկները.

Պ.—Կոմպրեսսիոն կրանիկները ծառայում են 1. ին, գլանները պայթված գազից մաքրելու, 2-րդ, բենզին կամ նավթ գլանների մեջ լցնելու, 3-րդ, կոմպրեսսիոն պակսեցնելու և 4-րդ գլանի մեռյալ կետերը զտնելու համար.

Հ.—Ի՞նչու մե ե կայանում գլանի պահպանելը.

Պ.—Գլանը պետք ե ջրով լավ հովսցնել և յուղով յուղել.

Հ.—Ի՞նչ իմանալ, վոր գլանները տաքացել են.

Պ.—Գլանների վրայի թափած յուղը սկսում ե այրվել, բաղխատորի ջուրը յեփ գալ և մոտորը քաշում ե վատ:

Հ.—Ի՞նչպես մաքրել գլանների շապիկը կամ բաղխատորը, ջրի կրային մասերից.

Պ.—Պետք ե մեկ վեղր ջրի մեջ լցնել յերեք կիլո քացախի թթվածին, խառնել և այդ խառնուրդը լցնել բաղխատորի մեջ, կես ժամ շարժիչը աշխատեցնելուց հետո, պետք ե թափել խառնուրդը և լվանալ բաղխատորը ջրով:

Հ.—Ո՞ւր ե գնում գլանների մեջի պայթած գազը 4-րդ տակտից հետո.

Պ.—Խլացման մեխանիզմի մեջ.

Մ Խ Ո Ց Ը (պորեց)

Հ.—Ի՞նչ ե մխոցը, ի՞նչից են նրան պատրաստում և վորտեղ ե նա աշխատում.

Պ.—Մխոցը բաժակաձև թափվածք ե չուգունից, պողպատից կամ ալյումինից, վորն աշխատում ե գլանի մեջ:

Հ.—Ի՞նչ ձևի յեն լինում մխոցների գլուխը և ի՞նչի համար են նրանք ծառայում.

Պ.—Մխոցների գլուխները լինում են ներս ընկած, գուրս ընկած և ուղիղ, նրանք ընդունում են իրենց վրա պայթված գազի ուժը և շարժածողի (շատունի) միջոցով տալիս են ծնկաձև առանցքին.



ՄԽՈՑԸ ԿՏՐԱԾ

Հ.—Վոր մխոցն ե կոշվում հասարակ և վորը կրկնակի գործողություն.

Պ.—Հասարակ գործողության մխոցն այն ե, յերբ նա պայթված գազի ուժը ընդունում ե իր վրա մի կողմից, իսկ կրկնակի գործողության մխոցն այն ե, յերբ մխոցը ճնշման ուժը ստանում ե յերկու կողմից.

Հ.—Վորքան ատմոսֆերա ունի գլանի գազը, յերբ նա գտնվում ե ճնշման տակ.

Պ.—4-7 ատմոսֆերա.

Հ.—Վորքան ատմոսֆերա ունի գազը, պայթման վարկյանին.

Պ.—15-25 ատմոսֆերա.

Հ.—Ի՞նչ ուժով ե ճնշում գազը գլանների պատերին, պայթված վարկյանին.

Պ.—3-ից 6 ատմոսֆերա ուժով.

Հ.—Ի՞նչպես ե մխոցը լուվում գլանի մեջ.

Պ.—Մխոցն աշխատելով գլանի մեջ (առանց յուղի), նա խիստ տաքությունից լայնանում ե և լուվում գլանի մեջ.

Հ.—Ի՞նչպես իմանալ, վոր մխոցները լուվել են գլանների մեջ.

Պ.—Սվտոյի կոնակը չի պտտվում.

Հ.—Ի՞նչպես պետք ե չափել մխոցի ընթացքը.

Պ.—Պետք ե բացել առաջի գլանի կրանիկը կամ հանել գլանի մոմը, մխոցը բարձրացնել վերին մեռյալ կետին և մափտուլով չափել գլանի մեջի տարածությունը մինչև մխոցի գլուխը և մափտուլի վրա նշան անել, հետո մխոցը իջեցնել իր ներքին մեռյալ կետը և նորից մափտուլով չափել ու նշանել, վորի յերկու կետերի տարածությունը հավասար կլինի մխոցի ընթացքին.

Հ.—Ի՞նչ տրամագիծ պետք ե ունենա մխոցն իր գլանում.

Պ.—Մխոցի տրամագիծը պետք ե լինի 2 միլիմետր պակաս գլանի, տրամագծից.

Հ.—Ի՞նչ հաստության են լինում մխոցի պատերը.

Պ.—Մխոցի պատերն ունենում են 3-5 միլիմետր հաստություն.

Հ.—Ի՞նչի յե հավասար մխոցի ընթացքը.
 Պ.—Մխոցի ընթացքը հավասար ե ծնկաձև առանցքի ծնկի կրկնակի յերկարությանը.

Հ.—Ի՞նչպես իմանանք զաղի փախչումը մխոցի միջոցով.

Պ.—Գաղի փախչումը կարելի յե իմանալ մխոցից, յերբ նրա մի կողմը սեղացած ե.

Ո Ղ Ա Կ Ն Ե Ր (կոլցա)

Հ.—Ի՞նչ ունի մխոցն իր մարմնի վրա.

Պ.—Մխոցն ունի առավակներ ողակների համար.

Հ.—Ի՞նչից են պատրաստում մխոցի ողակները.

Պ.—Մխոցի ողակները պատրաստում են փափուկ չուգունից.

Հ.—Ի՞նչի համար են ծառայում մխոցի ողակները.

Պ.—Ողակները ծառայում են կոմպրեսիան պահելու և ուժեղացնելու համար.

Հ.—Ի՞նչ անկանոնություններ կարող են պատահել ողակների հետ.

Պ.—Ողակները կարող են

կոտրվել, կորցնել իրենց ճկնությունը, այրվել, կպչել իրենց առավակների մեջ և ողակների կողպեքները կարող են հավաքվել մի կողմի վրա.

Հ.—Ի՞նչ պետք ե անել, վոր մխոցի ողակները չկրպչեն առավակների մեջ.

Պ.—Յեթե ավտոմոբիլը յերկար ժամանակ մնալու յե անգործադրելի, պետք ե կրանիկներից զլանի մեջ լցնել մի քիչ սպիտակ նավթ, յուղի հետ խառնած յերբեր չը պետք ե թողնել շարժիչի կրանիկները կամ մոմերը հանած, մանավանդ ձմեռը կամ անձրև ժամանակ.



ՄԽՈՅԸ ԻՐ ՈՂԱԿՆԵՐՈՎ ՅԵՎ
 ՄԽՈՅԻ ՄԱՍԸ

Հ.—Ի՞նչ բարդություն կարող ե առաջ գալ, յերբ ողակները չեն աշխատում (կորցրել են իրենց ճկնությունը).

Պ.—Ողակները չաշխատելու ժամանակ մատուրը լավ չի քաշում, կոմպրեսիան լավ չի լինում, գաղը փախչում ե կարտերի մեջ, զլանները մոմերը կեղտոտել են, մատուրը տալիս ե պերբեք.

Հ.—Ի՞նչ պետք ե անել նոր ողակների հետ մինչդեռ հաղցնելը նրանց մխոցի վրա.

Պ.—Պետք ե ստուգել ողակների տրամագիծը, լայնությունը և հաստությունը, վորից հետո յուղել ողակը, և հազցնել նրանց ափսոս, վոր կողպեքները չլինեն մի զծի վրա.

Հ.—Վերջան ողակներ են լինում մխոցի վրա.

Պ.—Մխոցի վրա լինում են 3-5 ողակներ.

Մ Խ Ո Յ Ի Մ Ա Տ Ը (պալից պորեցյա)

Հ.—Ի՞նչի համար ե ծառայում մխոցի մատը և ինչից են նրան շինում.

Պ.—Մխոցի մատը միացնում ե մխոցը շատունի հետ, մատը պատրաստում են խրոմո-նիկելի պողպատից և յենթաբարկում են ցեմենտիլովիլայի.

Հ.—Ի՞նչով են ամրացնում մատը մխոցի վրա.

Պ.—Շառպուրնի պտուտակով.


Շ Ա Ր Ժ Ա Ծ Ո Ղ (շառուն)

Հ.—Ի՞նչից են պատրաստում շատունը և ինչ մասերից ե նա բաղկացած.

Պ.—Շատունը պատրաստում են կալուղ պողպատից, նա բաղկացած ե վերին և ներքին գլուխներից ու շատունի մարմնից.

Հ.—Ի՞նչի համար են ծախծկում շատունը.

Պ.—Թեթևություն համար.



ՇԱՏՈՒՆԸ ՔԱՆԴԱԾ
 ՅԵՎ ՇԱՎԱՔԱԾ

Հ.—Ի՞նչ կարող ե լինել, յեթե առանցքակալներից մեկի բաբիսը հալվի.

Պ.—Շարժածողը սկսում ե ծեծել (տալ ստուկ), յեթե ուշադրություն չդարձնել կարող ե ծռվել կամ կոտրվել շատունը, մխոցի գլանը ե կարտերը.

Հ.—Ի՞նչ պետք ե անել, յերբ առանցքակալի բաբիսը հալված ե.

Պ.—Պետք ե հանել առանցքակալը ե նոր բաբիս թափել նրա մեջ.

ԾՆԿԱԶԵՎ ԱՌԱՆՑՔ (կալեհչաթի վալ)

Հ.—Ի՞նչից են պատրաստում ծնկաձև առանցքը.

Պ.—Ծնկաձև առանցքը պատրաստում են խրոմոնիկի պողպատից.

Հ.—Ի՞նչի համար ե ծառայում ծնկաձև առանցքը.

Պ.—Ծնկաձև առանցքը ընդունում ե իր վրա շարժածողի (շատունի) հարվածները ե հանձնում ե թափանիվին.

Հ.—Վճրքան առանցքակալների վրա յե կառուցում ծնկաձևի առանցքը.

Պ.—Ծնկաձև առանցքը կառուցում են 2, 3, 4 ե 5 առանցքակալների վրա.

Հ.—Ի՞նչ ե լինում ամրացրած ծնկաձև առանցքի 2 զլխի վրա.

Պ.—Ծնկաձև առանցքի առաջի մասում խուլ հազրած են շեռտերյոնկա, վորը աշխատեցնում ե բաշխման մեխանիզմին, իսկ յերկրորդ ծայրում ամրացրած ե թափանիվը, վորը հավասարակշռում ե շարժիչի աշխատանքը:


Հ.—Ի՞նչ անկանոնություն կարող ե պատահել ծնկաձև առանցքի հետ.

Պ.—Նա կարող ե ծռվել ե կոտրվել.

Թ Ա Փ Ա Ն Ի Վ (մախավիկ)

Հ.—Ի՞նչից են թափում թափանիվը ե ինչի համար ե նա ծառայում.

Պ.—Թափանիվը թափում են չուգունից, նա հավա-




ԾՆԿԱԶԵՎ ԱՌԱՆՑՔ
ՅԵՎ ԹԱՓԱՆԻՎԸ
ՄԻԱՍԻՆ

սարակշռում ե շարժիչի աշխատանքը, մխոցներին հանում ե իր մեռյալ կետերից ե ընդունում իր մեջ շաղկապման մեխանիզմը.

Հ.—Ի՞նչից ե կախված թափանիվի մեծությունը ե նրա ծանրությունը.

Պ.—Թափանիվի մեծությունը ե ծանրությունը կախված ե գլանների քանակից, վորքան շատանում ե գլանների թիվը, աչքան վորքանում ե թափանիվի քաշը ե մեծությունը.



ԹԱՓԱՆԻՎ

Խ Փ Ա Ն Ա Կ Ն Ե Ր (կապաններ)

Հ.—Ի՞նչ տեսակի խփանակներ են լինում ե ի՞նչի համար են նրանք ծառայում.


Պ.—Խփանակները լինում են ավտոմատիկ ե մեխանիչեսկի, մեխանիչեսկի խփանակները աշխատում են իր մեխանիզմի միջոցով, իսկ ավտոմատիկները աշխատում են ինքնուրույն, ֆիզիկական որոշիչի հիման վրա. խփանակները ծառայում են խառնուրդը գլանների մեջ ներածելու ե պայթված գազը արտածելու համար.

Հ.—Վճրքան խփանակ ունի ամեն մի գլանը ե ի՞նչպես են լինում նրանք կառուցած.

Պ.—Ամեն մի գլանն ունի 2 խփանակ, մեկը ներածման, իսկ մյուսը արտածման, նրանք լինում են կառուցած գլանի մի կողմից, յերկու կողմից կամ գլանի վերևից.

Հ.—Ի՞նչից են պատրաստում խփանակները ե ի՞նչ մասերից են նրանք բաղկացած.

Պ.—Խփանակները պատրաստում են խրոմոնիկելիվի պողպատից, նիկելի պողպատից ե ջրած պողպատից. նրանք բաղկացած են հետևյալ մասերից՝ խփանակի զլխից,



ՄԵԽԱՆԻՉԵՍԿԻ
ԽՓԱՆԱԿԻ ԽՓԱՆԱԿ

բանվոր մասից, խփանակի զլխից, զսպանակից, չեկալից, և ավաեից (տարեկալից)։

Հ.—Վեր խփանակներն են ավելի շուտ այրվում, և երաժմանները թե արտաժմանները։

Պ.—Շուտ այրվում են արտաժման խփանակները, վորովհետև նրանք գտնվում են կրակի առաջ, վորի տաքությունը հասնում է մոտ 1000 աստիճանի։

Հ.—Ի՞նչից է, վոր խփանակները լավ չեն նստում իրենց բների վրա և ի՞նչ բարդություններ կարող են դրանից առաջանալ։

Պ.—Խփանակները լավ չեն նստում իրենց բնի վրա, վորովհետև՝ 1. խփանակի բանվոր մասը կեղտոտված է, 2. չկա զազոր հրիչի և խփանակի մեջ 3. խփանակի զսպանակը կորցրել է իր ճկունությունը (դրանից առաջանում է (խառնուրդի) վատ սեղմում), 3. կարբյուրատորի մեջ լավում են պայթումներ 4. մատորը վատ է աշխատում (վատ քաշում)։

Հ.—Ի՞նչպես պետք է ուղղել խփանակների անկաշոննությունը։


Պ.—Պետք է խփանակներին անել պրիտիրկա, հրիչի և զսպանակի մեջ թողնել զազոր (տարածություն)։ Ներածման խփանակների համար կես միլիմետր իսկ արտաժմաններին մեկ միլիմետր։

Հ.—Կարելի չե արդյոք շարունակել ճանապարհը, յեթե արտաժման խփանակներից մեկը կոտվել է։

Պ.—Կարելի չե, պետք է նույն գլանի վարումը կտրել և կոմպրեսայոնի կրանիկը բացել։

Հ.—Ի՞նչ անել յեթե կոտվել է ներածման խփանակը։

Պ.—Պետք է 1. հանել խփանակի վրայի խցանը



ԱՎՏՈՄԱՏԻԿ ԽՓԱՆԱԿ

2. զնեղ խփանակի զլխի վրա յերկաթյա կամ պինդ փայտի կտոր և ուժեղ սեղմել նրան խցանով (խփանակի պրոպ-կայով) 3. բացել կրանիկը և 4. անջատել վարումը։

Հ.—Ի՞նչու խփանակները և նրանց զոխերը սովորա-կանից դուրս տաքանում են։

Պ.—Գլանի շապկի ջրի շրջանառությունը խանգար-ված է (խփանակները չեն հովանում)։

Հ.—Վեր խփանակներն ավելի լավ են հովանում, և երաժման թե արտաժմանները։


Պ.—Լավ հովանում են ներածման խփանակները, վորովհետև նրանք, բացի հովացումը ջրով, հովանում են նաև ներածման խառնուրդով, վորը գալիս է կարբյուրատորից։

Հ.—Վեր խփանակներն են ավելի կարիք դրում հաճախ մաքրելու (պրիտիրկայի), և երաժման թե արտաժմանները։

Պ.—Արտաժմանները, վորովհետև նրանք են բաց թողնում պայթված գազը գլաններից, վորի մուխը և յուզալի մասերը նստում են խփանակի բանվոր մասի վրա և կեղտոտում նրանց։

Հ.—Ի՞նչպես պետք է կատարել խփանակների պրիտիրկան և ի՞նչպես ստուգել, լավ է արդյոք կատարված այդ աշխատանքը։

Պ.—Խփանակների պրիտիրկան կատարելու համար պետք է հանել խփանակի վերի խցանը, ազատել խփանակը զսպանակից և բարձրացնել խփանակը իր բնի վրայից, վորից հետո խփանակի բանվոր մասի կեղտը պետք է լվանալ նավթով, չորացնել և նրա բանվոր մասին քսել յուղ, ցանել յուղի վրա նաժգակ (պողպատյա փոշի), խփանակին հաղցնել բարակ զսպանակ, զնեղ իր տեղը և պտտել նրան կալավարոտով աջ և ձախ, մոտա-



ԽՓԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿ-ՆԵՐԸ ԳԼԱՆԻ ՎՐԱ

վորապես մեկ կամ յերկու ժամ. (ժամանակ առ ժամանակ պետք է նրան հանել իր տեղից նորից քսել բանջոր մասին յուզ և ցանել նաժդակ): Պրիտիրկան վերջացնելուց հետո պետք է խփանակը, նրա բուհը և զլանը լվանալ նավթով, վորից հետո սառուզել թե արդյոք լավ է կատարված պրիտիրկան, զրա համար հարկավոր է խփանակի բանջոր մասի վրան քսել կավիճ, հազցնել նրան իր տեղը և կատարել նորից պրիտիրկա մեկ յերկու րոպե. յեթե կավիճն ամբողջովին ջնջվեց, դա կնշանակի աշխատանքը կատարված է լավ, իսկ հակառակ դեպքում պետք է շարունակել նորից նաժդակով պրիտիրկան.

Հ.—Խփանակի վճր մասն է ավելի շուտ մաշվում.

Պ.—Ավելի շուտ մաշվում է խփանակի բանջոր մասը և զոսի ներքին ծայրը.

Հ.—Վճր խփանակի պատճառով և ինչու խլացման մեխանիզմի մեջ լավում են պայթումներ.

Պ.—Արտածման խփանակի պատճառով, յերբ նա լավ չի նստում իր բնի վրա և բաց է թողնում չպայթված գազի մի մասը խլացման մեխանիզմի մեջ, վորից առաջանում է պայթումներ.


Հ.—Վճր խփանակի պատճառով կարբյուրատորի մեջ առաջանում է հրդեհ (պաժար).

Պ.—Ներածման խփանակի.

ԲԵԴՈՒԿՑԻՈՆ ԽՓԱՆԱԿ (բեզուկցիոն Կլապոն)

Հ.—Ինչու համար է ծառայում բեզուկցիոն խփանակը և ո՞նեն արդյոք բոլոր շարժիչներն աշխատի խփանակ.

Պ.—Բեզուկցիոն խփանակն իբր մեջ գտնվում է և լայնացնում զլաններից դուրս յեկած պայթված գազի մի մասը և ուղարկում է բենզինի բակը, բենզինի մակերևույթին ճնշելու համար: Բեզուկցիոն խփանակը կառուցում են միայն այն շարժիչների վրա, վորի բենզինի բակը գտնվում է ճշման տակ.



ԲԵԴՈՒԿՑԻՈՆ ԽՓԱՆԱԿ

Հ.—Ինչ անկանոնություն կարող է պատահել բեզուկցիոն խփանակի հետ.

Պ.—Պատահում են հետևյալ անկանոնությունները՝ 1. բեզուկցիոն խփանակի զսպանակը (ժամանակի ընթացքում) կորցնում է իր ճկունությունը, վորից առաջանում է դադի փախչում, 2. զսպանակի ռեզուլիրովկան անկանոն է, 3. խփանակի բանջոր մասը կեղտոտվում է. այդ անկանոնությունները ուղղելու համար հարկավոր է՝ 1. խփանակի զսպանակը փոխել, 2. հանել խփանակը և լվանալ բենզինով նրա բանջոր մասը, 3. խփանակի ռեզուլիրովկան ուղղել.

ԿՈՆՑԵՆՏՐԻԿ ԽՓԱՆԱԿ

Հ.—Վճր տեսակի խփանակն է կոչվում կոնցենտրիկ խփանակ.

Պ.—Կոնցենտրիկ խփանակներ կոչվում են նրանք, վորոնց ներածման և արտածման խփանակները կառուցված են մեկը մյուսի վրա.

Հ.—Ինչ տեսակի խփանակներ են ունենում մատորը կոնցենտրիկ խփանակներով.

Պ.—Կոնցենտրիկ խփանակներով մատորի ներածման խփանակները լինում են ավտոմատիկ, իսկ արտածմանները մեխանիչեսկի.

Հ.—Ինչու սկսեցին շինել կոնցենտրիկ խփանակներ.

Պ.—Վերսկեստե նրանք քիչ տեղ են բռնում և տալիս են հարմարություն բոլոր թափվածքը ավելի փոքրացնելու:

Լ Ր Ի Չ (Ցաչկա)

Հ.—Ինչի համար են ծառայում հրիչները և ինչի վրա յեն լինում ամրացրած նրանց շապիկը (կոժուխը).

Պ.—Հրիչները վորոշ վարկյանին հրում են և բարձրացնում խփանակներին (խառնուրդ ներածելու զլանի մեջ և զլանից պայթված գազը արտածելու համար): Հրիչները շապիկը ամրացնում են կարտերի վերի մասի վրա.

Հ.—Վերջին հրիչ և հարկավոր ամեն մի զլանի համար և լինչպես են լինում նրանք կառուցած.

Պ.—Ամեն մի զլանին հարկավոր է 2 հրիչ, մեկը ներածման, իսկ մյուսը արտածման խփանակների համար. հրիչները լինում են կառուցած զլանի մի կամ յերկու կողմից.

Հ.—Ի՞նչ մասերից է բաղկացած հրիչը.

Պ.—Հրիչը բաղկացած է՝ 1. պողպատյա զոխից իր ափսեյով (տարեկայով) կամ ուղիղով, 2. դայկայից և կոնարագայկայից, 3. հրիչի շապիկից.


Հ.—Ի՞նչից են թափում հրիչի շապիկը.

Պ.—Հրիչի շապիկը թափում են չուգունից կամ պղնձից.

Հ.—Ի՞նչն է բարձրացնում հրիչներին.

Պ.—Բաշխման առանցքի բուռնցքները.

ԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՑՔ (բասպրեգելիսեկի վալ)



ԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՑՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՄՈՏՈՐԻ ՄԻ ԿՈՂՄԻՑ ՅԵՎ ՅԵՐԿՈՒ ԿՈՂՄԻՑ

Հ.—Ի՞նչի համար է ծառայում բաշխման առանցքը.

Պ.—Բաշխման առանցքը կարգադրում է խփանակների աշխատանքը և հարկավոր վարկյանին նա իր բուռնցքների միջոցով բարձրացնում է խփանակներին.

Հ.—Ի՞նչու բաշխման առանցքը կոչվում է նաև կուլաչկովի կամ եքսցենտրիկովի վալ.

Պ.—Վորովհետև բաշխման առանցքն ունի իր վրա բուռնցքներ (կուլաչկներ) կամ եքսցենտրիկներ.


Հ.—Բացի բուռնցքներից ել լինչն է աշխատեցնում խփանակներին.

Պ.—Հրիչները.


ԱՌԱՆՑՔԱԿԱՆՆԵՐ (պասեիպեկներ)



ԳԼԱՆԱՁԵՎ ՌՈՒԿՈՎԻ ԱՌԱՆՑՔԱԿԱՆՆԵՐ



ԲԱՐԻՏԻ ԱՌԱՆՑՔԱԿԱՆՆԵՐ




ՇԱՐԻԿՈՎԻ ԱՌԱՆՑՔԱԿԱՆՆԵՐ

Հ.—Ի՞նչի համար են ծառայում առանցքակալները և ինչ տեսակի յեն նրանք լինում.

Պ.—Առանցքակալները հեշտացնում են առանցքների շփումը և աշխատանքը. առանցքակալները լինում են շարիկովի, բոլիկովի (կոնսձե և զլանաձե) ու պորնի և բարխովի.

Հ.—Ի՞նչ է բարխը և ի՞նչ հատկություն ունի նա.

Պ.—Բարխը կլեկի նման մետաղ է, վորը բաղկացած է կլեկից, սուրմայից և շատ քիչ մաս արձնից. բարխն ունի հատկություն ծծելու իր մեջ յուղ.



ՈՒՊՈՒՆԻ ԱՌԱՆՑՔԱԿԱՆՆԵՐ

Կ Ա Ր Տ Ե Ր

Հ.—Ի՞նչից են թափում կարտեր և վորբան մասերից է նա բաղկացած.

Պ.—Կարտերը թափում են չուգունից կամ ալյումինից. նա բաղկացած է 2 կամ 3 մասերից.

Հ.—Ի՞նչի համար է ծառայում կարտերի ներքին մասը և ի՞նչ կա նրա մեջ.

Պ.—Կարտերի ներքին մասը ծառայում է ինչպես յուղի բուն. նրա մեջ կան պաստեր, վորոնք չեն թող-

նում յուզը հավարդի մի կողմի վրա վերելքից կամ բարձրությունից իջնելու ժամանակ.

Հ.—Ի՞նչով են ամրացնում կարտերը բամայի վրա.

Պ.—Կարտերը ամրացնում են 3-4 պողպատյա բուտերով:

Հ.—Ի՞նչի համար ե ծառայում կարտերի վերի մասը.

Պ.—Կարտերի վերի մասը ծառայում ե լինչպես հիմք գլանների համար.

Հ.—Ի՞նչ ունի կարտերն իր մեջ.

Պ.—Կարտերն իր մեջ ունի՝ 1. ծնկաձև առանցք, 2 բաշխման առանցք, 3. շատուենի ներքի մասը, 4. շատուենի և արմատական (կարենավոյ) առանցքակալները, և 5. բաշխման առանցքի առանցքակալները.

Հ.—Ի՞նչ ե զանվում կարտերի առաջի մասում.

Պ.—Բաշխման մեխանիզմի շապիկը (կոժուխը).

Հ.—Ի՞նչով են միացնում (ձգում) կարտերի վերին և ներքին մասերը միմյանց հետ.

Պ.—Պողպատյա բուտերով.

Հ.—Ի՞նչ պետք ե դնել կարտերի վերին և ներքին մասերի արանքում նախքան նրանց ձգելը.

Պ.—Պրակապականեր հատուկ թղթից, կամ պրոպկայից.

Յ Ո Ւ Ղ Ո Ւ Մ Ը (սմազկա)

Հ.—Ի՞նչու համար ե ծառայում սմազկան.

Պ.—Սմազկան հեշտացնում ե առանցքների շփումը և պահպանում ե ավտոյի մեխանիզմը ժաշվելուց և տաքանալուց.

Հ.—Ի՞նչ տեսակ յուղեր են լինում առհասարակ.

Պ.—Յուղերը լինում են հանքային, բուսական և կենդանու.

Հ.—Վորանից են ստանում հանքային յուղերը.

Պ.—Հանքային յուղերը ստանում են՝ հանքերից.

Հ.—Ի՞նչ տեսակ յուղեր են գործածում ավտոմոբիլի համար.

Պ.—Ավտոմոբիլի համար գործածում են՝ հանքային յուղեր, 1) մեքենայի յուղ, 2) գլանի յուղ և 3) տավառ.

Հ.—Ի՞նչի յեն ավտոմոբիլի համար գործածում հանքային յուղեր.

Պ.—Վորովհետե հանքային յուղերը գլխաճում են բարձր աստիճանի տաքության.

Հ.—Ի՞նչ տաքության ե գլխաճում մեքենայի կամ գլանի յուղը.

Պ.—Մեքենայի յուղը գլխաճում ե մինչև 200 աստիճան, իսկ գլանի յուղը մինչև 300 աստիճան տաքության.

Հ.—Ի՞նչ տեսակի պետք ե լինի ավտոմոբիլի լավ յուղը.

Պ.—Լավ յուղն իր մեջ չպետք ե ունենա թթվածին մասեր, լավ յուղի վրա չպետք ե ազդի ցուրտը և վոշ ել տաքությունը.

Հ.—Ի՞նչպես ե յուղվում մատորը.

Պ.—Մատորը յուղվում ե թափահարվելով, ճնշման տակ (պոմպալի միջոցով) և կապիլլինները միջոցով.

Հ.—Ի՞նչով են յուղում արագությունը փոփոխող արկղը (կարտեկան) և գիֆֆերենցիալը.

Պ.—Կարտեկան յուղում են յերկու մասը տափառով և մեկ մասը գլանի կամ մեքենայի յուղով, իսկ գիֆֆերենցիալը միայն տափառով.

Հ.—Ի՞նչով են յուղում շաղկապման մեխանիզմը, (գիսկավոյե սցեպլենիյե).

Պ.—Շաղկապման մեխանիզմը (գիսկաների միջոցով) յուղում են յերկու մաս մեքենայի յուղով և մի մաս սպիտակ նավթով.

Հ.—Ի՞նչպես կարելի յե լիմանալ յուղի պակասությունը կարտերում.

Պ.—Մատորը տաքանում ե, ջուրը ռադիատորի մեջ յեփ ե գալիս, մխոցները լուվում են գլանների մեջ.

Հ.—Ի՞նչ կարող ե պատահել յեթե յուղը կարտերի մեջ պակասի.

Պ.—Կարող ե կարտերի մեջի բարիտովի պատշեպներինները հալվել, մխոցների ողակները ալրվել, մխոցները լուվել. ծնկաձև առանցքը և բաշխման առանցքը ծովել.

ՅԵՐԿՈՒ ՏԱԿՏԱՆԻ ՇԱՐԺԻԶ (գլուխախցնի մասեր)

Հ.—Ի՞նչ է յերկու տակտանի շարժիչը.


Պ.—Յերկու տակտանի շարժիչը կառավարելով յերկու տակտ, տալիս է մեկ բանվոր աշխատանք (ուսուցիչի խոսք).

Հ.—Ի՞նչու չեն գործածում յերկու տակտանի շարժիչ ներկա ավտոմոբիլներին վրա.

Պ.—Վերսկեան յերկու տակտանի շարժիչի կառուցելը ավտոմոբիլի վրա շատ անհարմար է, և նա չի տալիս մատուրին մաքուր խառնուրդ.

Հ.—Ի՞նչպես է շինված և լինչպես է աշխատում յերկու տակտանի մատորը.

Պ.—Յերկու տակտանի մատորի կարբյուրատորը անմիջապես միացված է կարտերին և ունի ավտոմատիկ խփանակ՝ խառնուրդը կարբյուրատորից կարտերի մեջ թողնելու համար. նրա աշխատանքը սկսվում է այսպես—միտոցն իր ներքին մեռյալ կետից բարձրանալով իր վերին մեռյալ կետը, նա իր տակի մասով ծծում է կարբյուրատորից խառնուրդը կարտերի մեջ, միտոցը իջնելով ցած նա իր տակի մասով դուրս է շարտում կարտերի մեջ հավաքված խառնուրդը հատուկ խողովակով (վորը կառուցված է զլանի կողքին) և խփանակի միջոցով զլանի մեջ առաջի տակտին, միտոցը ներքին մեռյալ կետից բարձրանալով վերին մեռյալ կետը, նա իր գլխով սղմում է զլանի միջի հավաքված խառնուրդը կամերա սփռելի մեջ և միևնույն ժամանակ միտոցը իր տակի մասով ծծում է կարբյուրատորից խառնուրդը կարտերի մեջ. միտոցը դեռ չհասած իր վերին մեռյալ կետին, զլանի մեջ առաջանում է ելքաորա-



ՅԵՐԿՈՒ ՏԱԿՏԱՆԻ ՄԱՏՈՐ

կան կայծ, վորը պայթեցնում է դաղը միտոցը մեծ ուժով և արագությամբ իր վերին մեռյալ կետից իջնում է ցած կատարելով իր գլխով բանվոր աշխատանք. (2-րդ տակտը) իսկ իր տակի մասով նա դուրս է քշում կարտակար ինջի խառնուրդը (հատուկ խողովակով) զլանի մեջ, միտոցը 2-րդ տակտին դեռ չհասած իր ներքին մեռյալ կետին մոտավորապես 45 աստիճան, բացվում է միաժամանակ զլանի յերկու կողմից կառուցած 2 արտածման խփանակները և պայթված դաղը մեծ ուժով դուրս է շարտվում զլանի միջից գլուխախցնի մեջ.

ԱՌԱՆՑ ԽՓԱՆԱԿ ՇԱՐԺԻԶ (բեզիլապանցի մասեր)

Հ.—Ի՞նչ է նշանակում առանց խփանակ շարժիչ.

Պ.—Մատորը, վորն աշխատում է առանց խփանակների, կոչվում է առանց խփանակ շարժիչ.

Հ.—Ի՞նչի միջոցով է աշխատում անխփանակ շարժիչը.


Պ.—Զալաանիկներին միջոցով.

Հ.—Վերքան զալաանիկներ են աշխատում ամեն մի գլանի մեջ.


Պ.—Ամեն մի գլանի մեջ աշխատում են յերկու զալաանիկներ.

Հ.—Ի՞նչպես են կոչվում զալաանիկները, ի՞նչ մեծություն են նրանք լինում և ի՞նչ բարձրություն վրա յե լինում ներքին և արտաքին զալաանիկների լուսամուտները.

Պ.—Զալաանիկները կոչվում են ներքին և արտաքին. ներքին զալաանիկները լինում են ավելի նեղ և յերկար, արտաքինները լինում են ավելի հասարակած և կարճ. լուսամուտներն արտաքին զալաանիկներին լինում են արտածմանը



ԱՆԽՓԱՆԱԿ ՇԱՐԺԻԶԻ ԱՌԱՆՑԻ ԲԼՈՎԵ ՇԱՆԱԾ



ԱՆԽՓԱՆԱԿ ՄՈՏՈՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԶԱԼԱՆԻԿՆԵՐԸ

յածը, ներածմանը բարձր, իսկ ներքին զալաանիկները լուսամուտները լինում են մի հավասարության և բարձրության վրա. միոցը կատարելով 2 տակտ, այդ ժամանակամիջոցում զալաանիկները կատարում են ընդամենը մի տակտ.

Հ.—Ի՞նչի միջոցով են աշխատում զալաանիկները.

Պ.—Զալաանիկներն աշխատում են իրենց շատուկների և բաշխման առանցքի միջոցով, փոքր ծնկերով առանցք: Անսխառն շարժիչի բաշխման առանցքն աշխատում է ծնկաձև առանցքի կենտրոնում հազցրած շատերյոնկայի միջոցով.



ԱՆՍՓԱՆԱԿ ՇԱՐՇԻՉԻ ԲԱՇԽՍԱՆ ԱՌԱՆԳԸ

Ճ Ն Շ ՈՒ Մ (կոմպրեսոր)

Հ.—Ի՞նչ է կոմպրեսորն.

Պ.—Յերկրորդ տակտին, յերբ միոցը բարձրանում է դեպի վերին մեռյալ կետը, նա սղմում է գլանի միջի խառնուրդը կամերա սժատի մեջ. այդ ճնշման գործողությունը կոչվում է կոմպրեսիա.

Հ Ա Կ Ա Ճ Ն Շ ՈՒ Մ (գեկոմպրեսոր)

Հ.—Ի՞նչ է գեկոմպրեսորն.

Պ.—Դեկոմպրեսորն պակասեցնում է գլաններում կոմպրեսիան.


Դ Ե Կ Ո Մ Պ Ր Ե Ս Ս Ո Ր

Հ.—Ի՞նչ է գեկոմպրեսորը.

Պ.—Դեկոմպրեսորը հատուկ կառուցվածք է, շինված բաշխման առանցքի վրա, վորը տալիս է հարմարություն 2 գլաններում արտածման խփանակները բաց թողելու յերկրորդ տակտին.

Հ.—Ի՞նչի համար է և ինչ մատրոնների վրա յեն կառուցում գեկոմպրեսորը.

Պ.—Դեկոմպրեսորը կառուցում են այն մատրոնների վրա, վորոնց կոմպրեսիան շատ մեծ է և մեկ մարդու չի կարողանում կոմպրեսիան հաղթահարել մատորը աշխատացնելու ժամանակ.



ԴԵԿՈՄՊՐԵՍՈՐ

ԿՈՄՊՐԵՍՍԻՈՆ ԿՐԱՆԻԿ

Հ.—Ի՞նչ է կոմպրեսիոն կրանիկը և վորտեղ է լինում նա կառուցած.

Պ.—Կոմպրեսիոն կրանիկը պղնձյա կրանիկ է, վորը լինում է կառուցված գլանի զլխին.

Հ.—Ի՞նչի համար է ծառայում կոմպրեսիոն կրանիկները.

Պ.—Կոմպրեսիոն կրանիկները ծառայում են

1. հակաճնշման համար (գլաններից կոմպրեսիան թողնելու համար).
2. գլանների մեջ բեռնին ածելու համար (մոտորը նոր աշխատեցնելու ժամանակ).
3. գլանների մեռյալ կետերը գտնելու համար.
4. գլանների մեջի վառումը ստուգելու համար.
5. յուզ և սպիտակ նավթ լցնելու համար (յերբ ալտոն յերկար ժամանակ պետք է կանգնած մնա).

Կ Ո Մ Պ Ր Ե Ս Ս Ո Ր

Ի.—Ի՞նչ է կոմպրեսորը.

Պ.—Կոմպրեսորը հատուկ ապարատ է, վորը խառցնում է իր մեջ ոգն իր միոցների միջոցով.

Հ.—Ի՞նչի համար ե ծառայում կոմպրեսորը.

Պ.—Կոմպրեսորը 1) մեծ հեշտությամբ փչում է ավտոմոբիլի կամեքաները, 2) առաջացնում է գազի ինքնապայթում գլանների մեջ (առանց էլեկտրական կալծի), 3) մատուրի ուժն ավելացնում է 50-80 տոկոս՝ տալով կարբյուրատորին չոր և խտացրած ուղ.

Կ Ո Մ Պ Ե Ն Ս Ա Տ Ո Ր

Հ.—Ի՞նչ ե կոմպենսատորը և ի՞նչի համար են նրան կառուցում.

Պ.—Կոմպենսատորը հատուկ մաս է կառուցված սու-մայի վրա, նա հավասարակշռում է ձեռքի արգելիչի աշխատանքը և համաչափ լայնացնում է հետի անիվների (արգելիչի) կալոգկաները.

Բ Ե Ն Զ Ի Ն

Հ.—Ի՞նչից են ստանում բենզինը և ինչպես.

Պ.—Բենզինն ստանում են հում նավթից, վորը դործարանում հատուկ պղինձների մեջ տաքացնում են մինչև 100 աստիճան, վորից սկզբում արտադրվում է բենզինը, նա անցնելով հատուկ խողովակների միջով սառչում է և թափվում մեծ բեղերվուարների մեջ, վորտեղ նա բիմիական նյութերի միջոցով գալում, մաքրվում է և ստացվում է այն մարուր բենզինը, վորը մենք դործադրում ենք մեր ավտոմոբիլների համար.

Բենզինից հետո, տաքացնելով ֆնացորդը մինչև 150 աստիճան ստանում են սպիտակ նավա, վորը նույնպես յենթարկվում է բիմիական գաման: Նավթից հետո՝ պղինձի տակին մնում է թանձր մնացորդ, վորից պատրաստում են գլանի, մեքենայի յուղ և տավա.

Հ.—Ի՞նչու ավտոմոտորի համար դործածում են բենզին և վոչ սպիտակ նավթ կամ սպիրտ.

Պ.—Վորովհետե բենզինը ամենահարմար վառելիքն է ներքին այրման շարժիչների համար: Բենզինի առավելությունը (լավ կողմը) այն է, վոր նա շատ շուտ հեղուկային գրությունից անցնում է գազային. բենզինը հեշ-

տությամբ պայթվում է մինչև 12 աստիճան ցուրտին և դրա համար էլ շարժիչն աշխատեցնելը բենզինով կատարում է վարկյանապես. բենզինի կալորիան (տաքության ուժը) 2 անգամ ավելի ուժեղ է քան 96 աստիճան սպիրտինը.

